

ՔԱՐՈՋԵՕՍԱԿԱՆ

**Տ. ԳԷՈՐԳ ԱՔԵՂԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՕՍՈՒԱԾ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ
ՄԱՏՈՒՑՈՒԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ
(24 Ապրիլ, 2023)**

*«Ես եմ Յարութիւն եւ կեանք. որ հաւատայ յիս, թէպէտ մեռանի, կեցցէ»:
(Ա. Թագ. Գ:9)*

Սիրելի հաւատացեալներ,

Այժմ կը գտնուինք յետ Յարութեան քառասնօրեայ տօնախմբական շրջանի մէջ, որը քրիստոնեաներու համար հոգեւոր բերկրանքի, Աստուածային շնորհներու վայելումի, ինչպէս նաեւ յաւիտենական կեանքը վերստանալու յոյսի եւ անոր լոյսով ցնծալու շրջան մըն է:

Մեր Տիրոջ Յարութիւնը մարդկային կեանքի նորոգութեան եւ մեղքի պատճառով այս աշխարհ մտած ապականութեան եւ մահուան իշխանութեան յաղթահարման սկիզբն է, այդ իսկ պատճառով այս Կիրակին կը կոչուի «Նոր Կիրակի»: Նոր կը կոչուի նաեւ մեր Տիրոջ՝ իր Յարութեամբ այս աշխարհին վրայ եկեղեցին հաստատելուն համար, որու միջոցաւ կը բաշխէ իր Աստուածային շնորհները, եւ անոնցմէ մեծագոյնը՝ իր կենարար Մարմինը եւ Արիւնը, որն իր մէջ ունի անապական կեանքի եւ համընդհանուր յարութեան թիւսմորը:

Մինչեւ Փրկչի Յարութիւնը, մարդկութիւնն իր բոլոր ձեռքբերումներով եւ նուաճումներով հանդերձ անճար եւ անօգնական կը մնար մահուան իրողութեան առջեւ, սակայն Տիրոջ յարութիւնը եղաւ առաջին յաղթանակը մահուան դէմ եւ այդ ի մտի ունենալով՝ Պօղոս Առաքեալ ուրախութեամբ կը գոչէ. «Ո՛ր է մահ յաղթութիւն քո, ո՛ր է դժոխք խայթոց քո» (Կորնթ. 15:55): Արդարեւ, ուրախալի է մեր Տիրոջ Յարութիւնը եւ պարծանքը՝ բոլոր քրիստոնեաներու, որովհետեւ այն աւետիսն է մարդկային կեանքին վրայ Աստուածային իշխանութեան վերահաստատումի եւ ասդենականի վրայ շարի իշխանութեան տապալումի, եւ, վերջապէս, իսպառ վերացումի:

Այսօր մենք կը նշենք նաեւ Հայոց Յեղասպանութեան 108-րդ տարեկիցը: 1915 թ.-էն ի վեր Ապրիլ 24-ը ամէն մի հայու յիշողութեան մէջ կը մնայ որպէս ազգային ողբերգութեան օր: Հայ ազգն իր հազարամեայ գոյութեան ընթացքին բազում փորձութիւններու միջով անցած է, բազում աղէտներ տեսած է: Յաճախ պետականութեան կորստեան պատճառով ինկած է տարբեր կայսրութիւններու լուծի տակ եւ տարատեսակ բռնութիւններու ենթարկուած է, սակայն այն ինչ կատարուեցաւ Առաջին Աշխարհամարտի տարիներուն՝ աննախադէպ էր, որովհետեւ մարդկային կորուստէն զատ զրկուեցանք նաեւ մեր պատմական բնօրրանի մեծագոյն մասէն, ուր ձեւաւորուած էինք որպէս ազգ

եւ ապրած էինք մինչեւ 20-րդ դար, եւ եթէ չըլլար վերջին եւ վճռական ճիգը՝ Սարգս-
րապատի հերոսամարտը, պիտի չունենայինք նաեւ այսօրուան փոքրիկ Հայաստանը,
որով կարծես առժամանակ կանխուեցաւ թուրքի եւ անոր ետեւը կեցած ուժերու հա-
յաջինջ ծրագրին ամբողջական իրագործումը: Սակայն այդ ծրագրին յղացողներն ու
գործադրողները վստահաբար պիտի չհանգստանան այնքան ատեն, մինչեւ որ իրենց
սկսած գործը կարողանան աւարտին հասցնել: Այսինքն՝ Հայ ժողովուրդի գլխուն տա-
կաւին կը շարունակէ դամոկլեան սուրի պէս կախուած մնալ բնաջնջումի եւ վերջնա-
կանապէս սեփական հայրենքէն տարագրումի վտանգը, եթէ Հայը իր փրկութեան եւ
գոյութեան երաշխիքները շարունակէ փնտռել իրմէ դուրս:

Մենք մինչեւ Յեղասպանութիւն զբաղած էինք Եւրոպական երկիրներու խիղճը
արթնցնելով, որպէսզի անոնք գան եւ ազատագրեն մեզի թուրքական լուծէն, կամ գո-
նէ ճնշում գործադրեն թուրքական կառավարութեան վրայ՝ բարեփոխումներ մտցնելու
Արեւմտեան Հայաստանի գաւառներու մէջ: Այս նպատակին էր ուղղուած այդ ժամա-
նակուայ գրեթէ բոլոր հայկական կուսակցութիւններու եւ հայ քաղաքական գործիչ-
ներու ջանքներն ու նախաձեռնութիւնները: Սակայն, ինչպէս գիտենք, այն որեւէ դրա-
կան արդիւնք չտուաւ, հակառակը, յանգեցուց մեր ազգի մեծագոյն ողբերգութեանը՝
Հայոց Մեծ եղեռնին: Բայց, կարծէք թէ, այդ ալ բաւական չէր դասեր քաղելու համար.
Յեղասպանութիւնէն ետք ալ շարունակեցինք արդարութիւն եւ իրաւունք պահանջել
աշխարհէն, այն պարագային, երբ նոյն աշխարհին առջեւ գործուեցաւ մեր ազգի մե-
ծագոյն նախճիրը:

Արդէն հարիւր եւ աւելի տարիներ են, ինչ Ապրիլ 24-ին թուրքական եւ Եւրոպա-
կան տարբեր դեսպանատներու առջեւ ցոյցեր կ'ընենք՝ անոնց ուշադրութիւնը մեր
կողմը գրաւելու համար: Սակայն որմէ՞ ինչ կը պահանջենք. մեր ազգի դահիճ թուր-
քերէն արդարութիւն, որոնք մեր հայրենքին տիրացան, թէ՞ Արեւմտեան երկրներէն,
որոնց լուռ համաձայնութեամբ գործուեցաւ մարդկութեան այդ մեծագոյն ոճիրը: Վեր-
ջապէս մենք ե՞րբ պէտք է հասկնանք Աւետարանական այն պարզ ճշմարտութիւնը,
թէ փրկութիւնը դուրսէն չի գար, այլ այն մեր ներսն է, եւ մեր ներսէն պիտի սկսի: Մեր
ամբողջ դժբախտութիւնը հէնց այս կարեւոր ճշմարտութիւնը չհասկանալու մէջ է, որ
յոյսերնիս մեր փոխարէն ուրիշներու վրայ դրած ենք եւ Աստուծմէ զատ օտար տէրեր
կը փնտռենք:

Ամենուր մենք զմեզ առաջին քրիստոնեայ ազգը կը հռչակենք, եւ տակաւին չենք
իւրացուցած մարդոց վրայ յոյս չդնելու Աստուծոյ պատգամները. որոնք խստագոյնս
կ'ազդարարեն. «Անիծեալ է այն մարդը, որն իր յոյսը մարդու վրայ կը դնէ» (Երմ. 17:5)
կամ՝ «Յոյս մի՛ դրէք իշխաններու վրայ, մարդոց որդիներ, որովհետեւ անոնցմէ փրկու-
թիւն չկայ» (145:3): Եթէ գոնէ վերջին հազարամեակի ընթացքին մեր յոյսը Աստծոյ
վրայ դրած ըլլայինք, մեր ինքնավստահութիւնը կը մեծնար եւ մեր ճակատագրին տէ-
րը կ'ըլլայինք ու վերջին թշուառութեան չէինք հասնի: Բայց նաեւ պէտք է ճիշդ ըմբռ-
նել Աստուծոյ վրայ յոյս դնելու իմաստը, որպէսզի անմտօրէն Աստուծոյ չմեղադրենք
եւ չըսենք, թէ այսքան ատեն յոյսերնիս Աստուծոյ վրայ դրած էինք, ի՞նչ օգուտ ունե-
ցանք: Գրիգոր Տաթեւացին այսպէս մտածողներու համար կ'ըսէ. «Յոյսն առանց աշ-
խատութեան ոչ է յոյս, այլ յանդգնութիւն» (Գիրք Հարցմանց): Արդարեւ, եթէ մենք
մեզմէ եկածը չենք ընէր եւ յաջողելու համար համապատասխան ջանքեր չենք թափէր
կամ Աստուածահաճոյ կեանքով չենք ապրեր, ի՞նչ համարձակութեամբ պիտի ակնկա-
լենք Աստուծոյ բարեհաճութիւնը կամ զօրակցութիւնը. մեր գործը ցանկն ու մշակելն

է, իսկ Աստուծոյ գործը՝ բարենպաստ եղանակ ապահովելն ու աճեցնելը:

Դարձեալ մենք զմեզ առաջին քրիստոնեայ ազգը կը կոչենք, բայց արդեօք ցանկութիւն ունի՞նք կատարուածի մէջ մեր մեղքերն ու սխալները տեսնելու, թէ՞ միայն դահիճը կը մեղադրենք իր ոճրագործութիւններու, իսկ մեծ տէրութիւնները՝ իրենց անտարբերութեանց համար: Հոգեւոր տեսանկիւնէ այս հարցը քննելով, մի՞թէ խելամտութիւն է շարունակ սատանան մեղադրել մեր դէմ չարիք նիւթելու եւ գործելու համար: Մի՞թէ յստակ չէ, որ անիկա երբեք պիտի չդադրի մեր հոգիներու կորստեան համար աշխատելէ, սակայն հարցն այն է, թէ մենք ի՞նչ կ'ընենք մեր հոգիները փրկելու համար: Ճիշդ նոյն կերպ, թուրքը իր նպատակին հասնելու եւ մեր հայրենիքին տիրելու նկրտումներով, շինայելով իր նիւթական միջոցները՝ յօդս կը ցնդեցնէ որեւէ խոչընդոտ: Միւս կողմէն եւրոպացին ալ ամենուր իր շահը կը հետապնդէ, որպէսզի իր ազգը օգտուի, իսկ մենք, որպէս հինգ հազար տարուայ պատմութիւն ունեցող ազգ, ինչո՞ւ չունինք համապատասխան զգուշութիւն եւ դիմադրողականութիւն՝ թշնամու շարժադրութիւնները հասկնալու, համապատասխան միջոցներ ձեռք առնելու եւ մեր նրկատմամբ անոր ոտնձգութիւններուն դէմ դնելու համար: Մենք զմեզ յանձնած ենք բախտի քմահաճոյքին եւ շարունակ կը բողոքենք մեր իսկ գէշ բախտէն:

Որեւէ կրօնի մէջ սատանայի եւ չարիքի մասին այնքան չի ուսուցանուիր, որքան քրիստոնէութեան մէջ: Պատճառն այն է, որ մի միայն Քրիստոսի լոյսն է, որ սփռուելով աշխարհի մէջ էապէս կը բացայայտէ խաւարը եւ չարի բոլոր գործերը: Ճշմարտութիւնը եւ Աստուծային լոյսը փնտռող քրիստոնեան ամէն վայրկեան պայքարելով այդ ճանապարհին արգելք հանդիսացող սատանային դէմ՝ հետզհետէ կը ստանայ անոր նրբագոյն հնարքներն ու խաբէութիւնները ճանչնալու կարողութիւն: Սուրբ հայրերն իրենց խրատներու մէջ յաճախ կը խօսին այդ ճանաչողութեան նշանակութեան մասին՝ նշելով, որ առանց ատոր անհնար է հասնիլ կատարելութեան: Եթէ անհատական փրկութեան պարագային զգուշութիւնը, խորագիտութիւնը, չարի հնարքները ճանչնալն ու անոր լարած թակարդներէն խուսափիլը այդքան կարեւոր եւ էական է, մի՞թէ նոյնը չէ պարագան քրիստոնեայ ազգի մը համար, մանաւանդ Հայ առաջին քրիստոնեայ ազգին համար, որ դարերով շրջապատուած եղած է այլակրօն թշնամի ազգերով եւ շարունակ գոյութեան եւ ինքնութեան պահպանման վտանգի առջեւ կեցած է:

Մեր Տէրը կ'ըսէ. «Գող ոչ գայ, եթէ ոչ զի գողասցի եւ սպանցէ եւ կորոուսցէ» (Յովհ. 10:10): Գողը եւ աւազակը չէ, որ մենք պատեհ-անպատեհ առիթներով պիտի մեղադրենք, որովհետեւ անոր գործը գողնալ ու սպանելն է, այլ նախ մենք զմեզ պիտի մեղադրենք, որ գողին եւ թշնամիին համար խոցելի եղած ենք՝ նախադրեալ ստեղծելով, որ ան իր շարժադիրը յաջողցնէ:

Մէկդի դնելով մեր ազգին բնորոշ պարծենկոտութիւնը՝ պէտք է քրիստոնէական լոյսի ներքոյ ճշմարիտ ինքնաքննութեամբ ճանչնանք եւ ընդունինք պատմութեան մէջ մեր բաժին մեղքերն ու սխալները, որոնք լայն դուռ բացած են մեծ աղէտներու եւ ազգակործան պատուհասներու, որոնցմէ օգտուելով՝ թշնամին, յարմար պահ մը իր սեւ գործը կատարած է:

Սեփական մեղքերը տեսնելը եւ անոնց համար ի սրտէ զղջալը շնորհ է եւ քրիստոնէական ամէնէն կարեւոր առաքինութիւնը, որը կը շարժէ Աստուծոյ ներողամտութիւնը եւ միաժամանակ ճշմարիտ վերընթացի ճամբայ կը բանայ: Անհաւատին կամ հոգեւոր կոյրին բնորոշ չէ սեփական մեղքերը տեսնելը կամ անոնց համար զղջալը:

Անոր բնորոշ է մշտական ինքնարդարացումը եւ սեփական սխալներու պատճառները ուրիշներու մէջ փնտռելը, որը ոչ միայն հոգեւոր փակուղի է, այլեւ կը շարժէ Աստծոյ արդարացի բարկութիւնը:

Եթէ քրիստոնէաբար անաշառ հայեացք նետենք մեր անցեալին, յատկապէս Մեծ եղեռնին նախորդող շրջանին, բազմաթիւ թերացումներ պիտի նկատենք մեր ազգային կեանքէն ներս, որոնք վառ գոյներով արտայայտուած են արեւմտահայ գրականութեան մէջ: Անոնցմէ առաւել յայտնիներն են Յակոբ Պարոնեանի «Արիստողոմ Աղա»-ն, «Ազգային Զոշեր»-ը, Երուանդ Օտեանի «Ընկեր Փանշունի»-ն եւ այլ գրողներու պատմուածքներ եւ երգիծական պատումներ, որոնք այդ օրերու հայ հասարակութեան բարոյական բարքերու անկեալ պատկերը կը ներկայացնեն: Ասոնց կողքին եթէ աւելցնենք հայկական կուսակցութիւններու ներազգային պառակտիչ գործունէութիւնը, եւ անոնց արկածախնդիր ու անհեռատես գործողութիւնները, Օսմանական կայսրութեան մէջ այս ու այն կողմ բախումներ հրահրելու եւ անարդիւնք ցոյցեր կազմակերպելու հետեւանքով մարդկային մեծ կորուստներու պատճառ կը դառնային, ինչպէս նաեւ հայ հոգեւորականութեան անկեալ վիճակը, հայ մտաւորականներու մեծ մասի հակակրօնական գաղափարները, որոնք իբրեւ թէ Եւրոպայի մէջ ուսանած եւ «լուսաւորուած», սակայն մկրտութեան շնորհը ուրացած մարդիկ էին եւ Հայաստան վերադառնալով՝ ճշմարիտ հաւատքը իբրեւ յետամնացութիւն եւ միջնադարեան խաւար շրջանի երեւոյթ կը քարոզէին՝ մեծ գայթակղութիւն դառնալով իրենց ազգակիցներու եւ հայրենակիցներու համար, պիտի տեսնենք, որ մենք էինք թէ՛ քաղաքականապէս, թէ՛ բարոյապէս եւ թէ՛ հոգեւորապէս այդ արհաւիրքները մեզի համար պատրաստողը:

Քրիստոնէական գիտակցութիւն չունեցող մարդոց համար այս խօսքերը հաւանաբար շատ խիստ կը թուին, սակայն մենք՝ որպէս հաւատացեալ ժողովուրդ, պարտինք հոգեւոր աչքերով եւ Աստուածային հայեացքով նայիլ մեր պատմութեանը, որպէսզի ճշմարիտ ինքնաքննութեամբ ճանչնանք մեր մեղքերը եւ սխալները, ի խորոց սրտի զղջանք եւ դարձեալ մեր ազգային միասնութիւնը կառուցենք մեր քրիստոնէական հաւատքի շուրջ, ինչպէս Ս. Սահակ Պարթեւ Հայրապետը կ'ըսէ. «Ճշմարիտ հաւատքն է եկեղեցի, որ գումարէ եւ շինէ զմեզ ի մի միաբանութիւն գիտութեան Որդւոյն Աստուծոյ» («Եկեղեցին ճշմարիտ հաւատքն է, որ Աստուծոյ Որդին ճանչցողներու միաբանութեան մը մէջ կը մէկտեղէ մեզ»: (Սոփերք Հայկականք):

Ազգային ինքնահայեցողութեան եւ ինքնաքննադատութեան նպատակը բնաւ ալ թուրքի ոճրագործութիւնը արդարացնելը չէ, Աստուած անպայման իր արդար դատաստանը օր մը պիտի տեսնէ հոգեւոր թշնամիի ձեռքին գործիք ծառայած այս ազգին նրկատմամբ, այլ՝ ճշմարիտ ինքնաճանաչման հասնիլը եւ ետդարձի ճանապարհը բռնելը, որպէսզի Աստուած մեզի զօրաւիգ գտնելով՝ կարողանանք ոտքի կենալ այս ինկած, կոտորուած ու նուաղած վիճակէն:

Եթէ իսկապէս մենք ինքնաճանաչողութեան այս ճանապարհով շարժինք, վստահաբար Սաղմոսի խօսքերով մեր թշնամիներու սուրերը իրենց սիրտերը պիտի մտնեն եւ անոնց աղեղները պիտի փշրուին. «Սուրք նոցա մտցեն ի սիրտս նոցա եւ աղեղունք նոցա փշրեսցին» (Սղմ. 36:15), բայց եթէ յամառենք մեր խստասրտութեան մէջ, պէտք է նաեւ այն տողերը, ուր սաղմոսի բառերը կ'ըսեն. «Աստուած դատաւոր արդար հզօր եւ երկայնամիտ, որ ոչ ածէ զբարկութիւն իւր զօրհանապազ. ապա թէ ոչ դառնայ առ նա, սուր իւր սրեալ է եւ զաղեղն իւր լարեալ» («Արդար, հզօր եւ համբերատար դատաւոր է Աստուած, որն իր զայրոյթը հանապազ չի թափեր, սակայն եթէ Անոր չդառնանք,

իր սուրբ սրուած է, իսկ աղեղը՝ լարուած»։ Սղմ. 7:12)։

Մենք Յարութեան հաւատքի վրայ խարսխուած ժողովուրդ ենք, այս իսկ պատճառով ինչպիսի գողգոթաներու միջով ալ որ անցած ենք ցայժմ, Աստուած դարձեալ յարութիւն տուած է մեզի։

Խաչը, որ հին աշխարհի մէջ չարչարանքի եւ մահուան գործիք էր, Փրկչի խաչելութեամբ եւ յարութեամբ դարձաւ կեանքի գործիք եւ յաղթութեան նշան, այդպէս ալ մեր ժողովուրդի տառապանքը կարող է դառնալ ազգային զարթոնքի եւ հոգեւոր վերածնութեան պատճառ, եթէ օտարներուն ապաւինելու փոխարէն ապաւինինք մեր Տիրոջը եւ աշխարհէն արդարութիւն պահանջելու փոխարէն նախ ինքներս վերահաստատուինք Աստծոյ արդարութեան մէջ։ Այն ատեն միայն մեր թշնամիները կը ստանան իրենց արժանի հատուցումը, իսկ մենք կը պարծենանք Քրիստոսի Խաչով, որուն փառք եւ երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

